ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՎԱ-001

ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի գործունեության ֆինանսավորումն ապահովելու մասին

ք. Երևան «30» հունվար 2019թ.

«Վարչապետի աշխատակազմ» պետական մարմինը (այսուհետ՝ Աշխատակազմ), ի դեմս գործերի կառավարչի պաշտոնակատար Վահան Պապիկյանի, մի կողմից և ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակը (այսուհետ՝ Գրասենյակ), ի դեմս տնօրեն Ավետիս Ավագյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Պաշտոնաթող հանրապետության նախագահի գրասենյակի գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 856-Ն որոշումը, ինչպես նաև հիմնվելով Երևանի քաղաքապետի 2014 թվականի հունվարի 10-ի «Ծիծեռնակաբերդի խճուղի հ.10 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Լևոն Տեր-Պետրոսյանին պատկանող բնակելի տան կիսանկուղային և 1-ին հարկերի տարածքների գործառական նշանակությունը հասարակական սահմանելու մասին» որոշման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Աշխատակազմը պարտավորվում է վճարել Երևան քաղաքի, Ծիծեռնակաբերդի խճուղի 10 հասցեում գտնվող տան կոմունալ ծախսերի (գազ, ջուր, էլեկտրաէներգիա) յոթանասունհինգ տոկոսը՝ համաձայն Գրասենյակի կողմից ներկայացվող մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերի:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Գրասենյակը պարտավորվում է ամեն ամսվա հինգերորդ օրը Վարչապետի աշխատակազմ ներկայացնել նախորդ ամսվա կոմունալ ծախսերի մատակարարներից ստացված հաշիվ-ապրանքագրերը:

2.2 Վարչապետի աշխատակազմը պարտավորվում է ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված ծախսերի վճարումը, ընդ որում, վճարումն իրականացնելու է անկանխիկ ձևով՝ համապատասխան փաստաթղթերի առկայության հիման վրա:

3. Այլ պայմաններ

3.1 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը

իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն պայմանագրի կնքման պահից «ՀՀ կառավարության աշխատակազմ» ՊԿՀ-ի և ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի միջև 2014 թվականի հունվարի 14-ին կնքված «ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակի գործունեության ֆինանսավորումն ապահովելու մասին» պայմանագիրը համարել լուծված:

3.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4 Սույն պայմանագիրը տարածվում է 01.01.2019թ. կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 31.12.2019թ. ներառյալ :

3.5 Պայմանագիրը կազմված է 2 էջից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Աշխատակազմ	Գրասենյակ
«Վարչապետի աշխատակազմ» Պետական մարմին Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարական N1 շենք	ՀՀ պաշտոնաթող նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գրասենյակ Հասցե՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 10
Գործերի կառավարչի պաշտոնակատար՝ Վահան Պապիկյան	Գրասենյակի տնօրեն՝ Ավետիս Ավագյան
Կ.Տ.	Կ.Տ.